

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԵԶԻԲ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ

Դիվանագիտական ոճը պաշտոնական-գործնական ենթաոճերից է, որն աշխարհի տարբեր լեզուներում բնականորեն ունի ինքնօրինակություններ: Դիտարկենք դրա առանձնահատկություններն իսպաներենում:

Դիվանագիտությունը միջազգային տարածայնությունների խաղաղ ճանապարհով լուծման արվեստ է: Այն նաև միջազգային հարաբերությունների վրա ներդաշնակ ազդեցության հմտություն է, որը ենթարկվում է որոշակի կանոնների և սովորույթների:

«Դիվանագիտական լեզու» արտահայտությունն օգտագործվում է երկու տարբեր հասկացություններով. նախ դա այն լեզուն է, որի միջոցով վարվում են դիվանագիտական հարաբերությունները, և կազմվում են միջազգային պայմանագրերը, այնուհետև մի շարք հատուկ տերմինների ու արտահայտությունների համամասնություն, որոնք էլ կազմում են պայմանական դիվանագիտական բառապաշարը:

Ներկայումս չկա մի այնպիսի պարտադիր լեզու, որն օգտագործվի պաշտոնական դիվանագիտական հարաբերությունների վարման և միջազգային պայմանագրերի ձևակերպման համար: Նախկինում դիվանագիտության լեզու էր համարվում ֆրանսերենը: Աստիճանաբար որդեգրվում է լեզուների հավասարության սկզբունքը: Չնչին բացառությամբ արտաքին հարաբերությունների պետական մարմինները վարում են պաշտոնական թղթակցությունը, հատկապես դիվանագիտական փաստաթղթերի փոխանակումը իրենց պաշտոնական լեզուներով:

Ինչ վերաբերում է «դիվանագիտության լեզու» հասկացության ետևորդ իմաստին որպես հատուկ տերմինների և դարձվածքների ամբողջություն (դրանք կազմում են դիվանագիտական պայմանական բառապաշարը, օրինակ veto - վետո, status quo - ստատուս-քվո, modus-vivendi - մոդուս վիվենդի և այլն), ապա դրանք քիչ են օգտագործվում ժամանակակից դիվանագիտական փաստաթղթերում: Դիվանագիտական ոճի վերաբերյալ մի շարք ուշագրավ դիտարկումներ են արված Վիլդների «Դիվանագիտության տեխնիկա» գրքում: «Դիվանագիտական ոճը», գրում է հեղինակը, պետք է տարբերվի իր պարզությունը և հստակությամբ: Սա նշանակում է ոչ թե արհեստավորական արտահայտվելու

պարզություն, այլ պարզության ձև, որը կարողանում է յուրաքանչյուր առարկայի համար ընտրել միակ հարմար բառը»¹:

Հետաքրքիր է վերլուծել դիվանագետին իբրև լեզվական մասնագիտության ներկայացուցչի, ներկայացվող պահանջները: «Զգուշավորությունը և վստահություն ձեռք բերելու ընդունակությունը թերևս այդ պահանջներից ամենակարևորներն են: Վստահություն է վայելում այն դիվանագետը, որի խոսքը հեղինակավոր է, որի վարքագծի ոճն ինքն իրենով տեղավորվում է պետությունների հարաբերությունների ընդհանուր ուրվագծի մեջ», - այսպես է որակավորում դիվանագետին քաղաքական հայտնի գործիչ և դիվանագետ Ա. Կովալովը²:

Դիվանագիտական գործունեության կարևոր մաս է դիվանագիտական փաստաթղթերի կազմումը: Դիվանագիտական թղթակցությունը պետության արտաքին քաղաքականության խնդիրների և նպատակների իրականացման դիվանագիտական գործունեության հիմնական ձևերից ու ծառայության կարևոր ուղղություններից մեկն է, որն էական դեր է խաղում արտաքին գործերի գերատեսչության և դիվանագիտական ներկայացուցչությունների միջև ընթացող աշխատանքներում: Դիվանագիտական թղթակցությունը պետք է ենթարկվի միջազգային պրակտիկայով ընդունված ընդհանուր կարգերին ու կառուցվի այնպես, որ պետությունների և նրանց ներկայացուցչությունների միջև հարաբերությունները հիմնվեն հավասարության ու փոխադարձ հարգանքի սկզբունքների վրա:

Տարբերում են դիվանագիտական թղթակցության հետևյալ տարատեսակները՝ անձնական հայտագրեր, վերբալ հայտագրեր, շրջաբերական հայտագրեր, հուշագրեր, անձնական նամակներ³:

Անձնական հայտագիրը (nota firmada) ունի նամակի ձև, որը կազմվում է առաջին դեմքով, իսկ վերջում դրվում է ուղարկողի ստորագրությունը: Անձնական հայտագրի տեքստ սկսվում է դիմելաձևով «Estimado Señor Presidente», «Su Excelencia», «Excelentísimo Señor Embajador», և ավարտվում հաճույախոսությամբ «Me valgo de la oportunidad para reiterar a Vuestra Excelencia el testimonio de mi más alta consideración»:

Վերբալ հայտագիրը (nota verbal) համարվում է դիվանագիտական թղթակցության ամենատարածված փաստթուղթը: Դրանցով են վարում իրենց

¹ Wildner H. Die Technik der Diplomatie. Wien, Springer - Verlag, 1959. I. СЛОВАРИ

² Ковалев А. В., Азбука дипломатии, Москва, «ИМО», 1968

³ Զալըմյան Լ., Դիվանագիտական և հյուպատոսական ծառայություն և իրավունք, Վպղուն, Երևան, 2005

թղթակցությունն արտաքին գործերի նախարարություններն ու դիվանագիտական ներկայացուցչությունները: Դրանք կարող են բովանդակել հարցերի լայն շրջանակ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն: Այդ հայտագրի տեքստը գրվում է երրորդ դեմքով: Վերբայ հայտագիրն սկսվում ու ավարտվում է հաճոյախոսության ձևակերպումներով «La Secretaria de Relaciones Exteriores de la Republica de Honduras aprovecha la oportunidad de expresar a la Secretaria de Relaciones Exteriores de Brasil las seguridades de su alta consideración»:

Շրջաբերական հայտագրով (nota circular) արտաքին գործերի նախարարությունը իր երկրում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին տեղեկացնում է տարբեր հանդիսությունների, մաքսային ռեժիմի փոփոխությունների և այլ իրադարձությունների մասին:

Հուշագիրը (memorando) կարող է լինել առանձին փաստաթուղթ կամ վերբայ հայտագրի հավելված: Վերջինիս դեպքում հուշագիրը զարգացնում և հիմնավորում է հայտագրի բովանդակությունը: Հուշագրի առանձնահատկություններից է այս կամ այն հարցի փաստացի կամ իրավաբանական մանրամասների շարադրումը: Այն զգալիորեն չի տարբերվում հայտագրից, բացառությամբ, որ չի սկսվում ու ավարտվում հաճոյախոսություններով և չի ստորագրվում:

Անձնական նամակները (cartas personales) ուղարկում են պաշտոնական ծանոթ անձին կապված անձնական խնդրանքների, շնորհակալության կամ այլ հարցերի հետ, որոնց բննարկումը պաշտոնական մակարդակով անցանկալի է:

Դիվանագիտական թղթակցությունն իսպաներենում պետք է ենթարկվի որոշակի պահանջների, այն է մակդիրներից, ածականներից, դրանց գերադրական աստիճաններից, համեմատություններից, չափազանցություններից, ինչպես նաև կտրուկ արտահայտություններից խուսափում: Պետք է դրսևորվի նաև քաղաքավարություն կիրառելով հաճոյախոսության առանձնահատուկ ձևակերպումներ: Կարևոր է խոսքի նրբերանգների ընտրությունը, օրինակ Հենրի Չորրորդի ժամանաշրջանում ֆրանսիացի դիվանագետ ժաննեհին միջնորդական առաքելությամբ ուղարկեցին Հոլանդիա համոզելու Միացյալ գավառներին և Իսպանիային անցնել խաղաղ բանակցությունների: Ոչ Օրանի արքայազնը, ոչ էլ Իսպանիայի թագավորը հակված չէին բանակցելու: Այդ բանակցությունները երկու տարի ընդհատվում և վերսկսվում էին մի քանի անգամ: Ի վերջո, ժաննեն, իմանալով խոսքի զորությունը, որոշում է «խաղաղություն» բառը փոխարինել «երկարաժամկետ զինադադար» արտահայտությամբ: «Խաղաղությանը» չհամաձայնող միապետների ինքնասիրությանը «զինադադարը» ընդունելի էր:

Դիվանագիտական փաստաթղթերի համար հատկապես կարևոր է ոչ թե ոճական կատարելությունը, այլ բացարձակ համապատասխանությունը ենթադրվող թվանդակությանը, դիրքորոշման ճիշտ արտահայտմանը:

Դիվանագիտության բառապաշարին բնորոշ է լատիներեն կամ ֆրանսերեն ծագում ունեցող միջազգային դիվանագիտական և միջազգային իրավունքի տերմինների օգտագործումը. օրինակ *consul*, *convención*, *demarché*, *raprochement* և այլն: Երբեմն դիվանագիտական տեքստերում լատիներեն տերմիններն ու դարձվածքներն օգտագործվում են լատիներեն գրությամբ, օրինակ *persona non grata*, *modus vivendi*, *status quo* և այլն:

Դիվանագիտական տեքստերին բնորոշ է գրական ընդհանուր բառերի և բառակապակցությունների կիրառումը որպես տերմիններ, օրինակ «*protocolo*» բառը բառացի նշանակում է կրճանագրություն, սակայն որպես դիվանագիտական տերմին արարողակարգ:

Դիվանագիտական փաստաթղթերում հաճախ օգտագործվում են բառեր, որոնք այդ փաստաթղթերին հանդիսավոր հնչեղություն են տալիս, օրինակ *distinguido visitante* բառը հյուր, *visita de cortesía*-քաղաքավարության այց, *séquito*-ուղեկցող անձինք և այլն: Օգտագործվում են նաև այնպիսի դիմելաներ, ինչպես, օրինակ *Vuestra Excelencia*- Ձերդ Գերազանցություն, *Su Excelencia Reverendísima*-Ձերդ Սրբազանություն և այլն, և հաճոյախոսություններ *Muy atentamente* - խորին հարգանքներով, *tengo el honor de* - պատիվ ունեմ և այլն:

Հաճոյախոսության արվեստը դիվանագիտական լեզվում ունի հատուկ արդիականություն և իմաստ: Հաճոյախոսություն, զովեստի խոսքեր, հիացմունքի արտահայտում դրանք բոլորը միջազգային հարաբերությունները ամրապնդելու միջոցներ են: Օրինակ

«*Las distinguidas cualidades que adornan al Señor Borbón Gonzalez me hacen esperar en el desempeño de su importante Misión logrará alcanzar las simpatías de Vuestra Excelencia y de Su Gobierno, y...*»

«*Señores embajadores, señoras y señores, Intervengo hoy por primera vez ante este Consejo Permanente como presidente en ejercicio de la OSCE, y lo hago con un doble sentimiento. En primer lugar, de satisfacción, porque no existe ninguna otra organización como la OSCE en el entorno mundial*» (Իսպանիայի ԱԳ նախարար Ա. Արգատինոսի ելույթից)¹:

¹ <http://www.unicef.org/SocioCollection/Documentos/MinisterioPublicaciones/42010/C1- LaboAdm0rativos/2005.pdf>

Դիվանագիտական փաստաթղթերի ոճը մոտ է հրապարակախոսականին, ինչը հատկապես վերաբերում է միջազգային փաստաթղթերին: Այս դարաշրջանը շնորհիվ է նրանց սոցիալ-քաղաքական հատուկ հնչեղություն: Դիվանագիտական ենթաոճին բնորոշ են արտահայտչական և հուզական բառեր, օրինակ

«Es un motivo de **honda satisfacción** encontrarme con este **distinguido grupo de personalidades**, tantos buenos amigos, con los que desde hace muchos años he tenido el honor de colaborar en la difícil tarea de orientar los destinos del Próximo y Medio Oriente hacia un **futuro de paz y prosperidad** en el seno de la comunidad internacional»

«**Arumado del deseo** de estrechar más, si cabe, las **cordiales** relaciones de amistad que **felizmente** existen entre vuestro país y Los Estados Unidos Mexicanos, he decidido acreditar ante el Gobierno de Vuestra Excelencia al Señor Doctor Salvador R.Guzmán, con el carácter de Embajador Extraordinario y Plenipotenciario». (Salvador Castañeda Castro, Presidente de la República de El Salvador)

Դիվանագիտական տեքստերի լեզվին բնորոշ են փոխանվանությունները, օրինակ «Իսպանիայի կառավարությունը» բառակապակցությունը փոխարինվում է «Իսպանիա» բառով: Օրինակ

«**España** está dispuesto a continuar colaborando en el ámbito político y económico con....»: «Իսպանիան պատրաստ է շարունակել համատեղ աշխատանքը քաղաքական և տնտեսական ոլորտներում...» (մեջբերում Մարիանո Ռախոյի ողջունի խոսքերից):

«**España** quiere ayudar a las partes y sumar esfuerzos con el Cuarteto y su Representante en la búsqueda de una solución definitiva».(Իսպանիայի ԱԳ նախարար Ս. Մորատինոսի ելույթից)⁵:

Միջազգային հարաբերությունների պատմությունը հազեցած է հստակ ձևակերպումներով, որոնք բավականին վառ և սեղմ ձևով արտահայտում են գործընթացներ ու սկզբունքային դիրքորոշումներ համաշխարհային քաղաքականության մեջ, օրինակ՝ la guerra fría-սառը պատերազմ, el détente - միջազգային լարվածության թուլացում, la paz sin anección y contribuciones-խաղաղություն առանց անեքսիայի և հատուցումների:

Այսօր կարելի է խոսել լեզվային ստանդարտի գոյության մասին կիչներ, առանց որոնց դժվար է պատկերացնել դիվանագիտական որևէ փաստաթուղթ: Դրանք պարզեցվում են տեքստերի կազմման գործընթացը և խմայում

հասցեատիրոջ ժամանակը ապահովելով ընթերցող կողմի միանշանակ ըմբռնումը: Դրանց թվում են la conversación constructiva-կառուցողական երկ-խոսություն, al más alto nivel -ամենաբարձր մակարդակով և այլն:

Դիվանագիտական լեզվի ձևաբանական առանձնահատկություններից կարելի է նշել որոշ խոսքի մասերի բազմակի և մասնակի օգտագործումը:

Պաշտոնական-գործնական ոճի, մասնավորապես դիվանագիտական ենթաոճի վառ գծերից մեկը բայական գոյականների օգտագործումն է, օրինակ *desarme* - զինաթափում:

Դիվանագիտական ենթաոճի, ինչպես նաև պաշտոնական-գործնական տեքստերի կարևորագույն առանձնահատկությունն է բայը «մենք» դերանվան հետ միասին: Օրինակ «Մենք կոչ ենք անում բոլոր պետություններին...», «Մենք հաստատում ենք մեր հավատարմությունը...» և այլն:

«*Llamamos a todos los Estados que no lo hayan hecho, a que consideren la posibilidad de formar parte, urgentemente, de todas las convenciones y protocolos relativos al terrorismo,...*».(XX-րդ դարի երեսնամյա զագաթաժողով, Արգենտինա, 2010):

Իսպաներենում դիվանագիտական լեզվի առանձնահատկություններից է հապավումների օգտագործումը, օրինակ

« La misión de la **OIDDH** (Oficina de Instituciones Democráticas y Derechos Humanos) va mucho más lejos, pues abarca un conjunto muy amplio de actividades democratizadoras que tienen por objeto acortar las distancias entre los compromisos adquiridos sobre el papel y la realidad imperante en los Estados participantes. » (Իսպանիայի ԱԳ նախարար Ա. Սորատինոսի ելույթից)⁶:

«La Conferencia de la Presidencia de la **OSCE** (Organización para la Seguridad y la Cooperación en Europa) sobre intolerancia y discriminación contra los musulmanes, celebrada en Córdoba los días 9 y 10 de octubre, ha representado una iniciativa importante para nuestra Presidencia,... » (Իսպանիայի ԱԳ նախարար Ա. Սորատինոսի ելույթից)⁷:

Դիվանագիտական տեքստերին բնորոշ են փոխաբերությունների կիրառումը, սակայն հաճախ այդ փոխափոխաբերությունները կարող են ստեղծել

6

<http://www.macc.es/SiteCollectionDocuments/Ministerio/Publicaciones/2005/DGCE/LibroMoratinos2005.pdf>

7

<http://www.macc.es/SiteCollectionDocuments/Ministerio/Publicaciones/2005/DGCE/LibroMoratinos2005.pdf>

վերջնագրի տպավորություն: Վերջինս հաճախ հարթեցվում է ավելի ճկուն ձևակերպումներով: Օրինակ

«Mi Gobierno no puede permanecer indiferente» -«Մեր կառավարությունը անտարբեր չէ» արտահայտությամբ դիվանագետը ցանկանում է ասել, որ իր պետության համար խնդիրը կարևոր է, և նա կարող է որոշակի քայլեր ձեռնարկել խնդիրը լուծելու համար:

«Mi Gobierno no puede hacerse responsable de las consecuencias» -«Մեր պետությունը պատասխանատու չէ հետևանքների համար» արտահայտությամբ դիվանագետը ցանկանում է զգուշացնել «Եվս նեկ քայլ, և մենք կհարձակվենք»:

Վերը նշված օրինակներից կարելի է ենթադրել, որ դիվանագիտական ենթադրում հրամայական եղանակը կիրառվում է միայն բացառիկ դեպքերում բողոքի հայտագիր կամ վերջնագիր ներկայացնելիս:

Դիվանագիտական տեքստերի ձևաբանական առանձնահատկություններից է բայի անորոշ ձևի կիրառումը: Օրինակ Las funciones consulares consistiran en:

a) **proteger** en el Estado receptor los intereses del Estado que envía y de sus nacionales, sean personas naturales o jurídicas, dentro de los límites permitidos por el derecho internacional;

b) **fomentar** el desarrollo de las relaciones comerciales, económicas, culturales y científicas entre el Estado que envía y el Estado receptor, y **promover** además las relaciones amistosas entre los mismos, de conformidad con las disposiciones de la presente Convención;

c) **informarse** por todos los medios lícitos de las condiciones y de la evolución de la vida comercial, económica, cultural y científica del Estado receptor, **informar** al respecto al gobierno del Estado que envía y **proporcionar** datos a las personas interesadas: (Վիեննայի Կոնվենցիան Հյուպատոսական կապերի մասին):

Ինչ վերաբերվում է իսպաներենում դիվանագիտական փաստաթղթերի շարահյուսությանը, պետք է նշել, որ այն տարբերվում է իր բարդությամբ: Գերակշռում են երկարաշունչ նախադասությունները հազեցված դերբայական դարձվածներով, բարդ ստորադասական նախադասությունները հիմնականում որոշիչ երկրորդականներով: Հատկանշական է նաև նախադասության համադաս անդամների կիրառումը, որոնք հաճախ ներկայացվում են գծագրային տեսքով բաժանվելով պարբերությունների: Օրինակ

Nosotros los pueblos de las Naciones Unidas resueltos

• a preservar a las generaciones venideras del flagelo de la guerra que dos veces durante nuestra vida ha infligido a la Humanidad sufrimientos indecibles,

• a reafirmar la fe en los derechos fundamentales del hombre, en la dignidad y el valor de la persona humana, en la igualdad de derechos de hombres y mujeres y de las naciones grandes y pequeñas.

• a crear condiciones bajo las cuales puedan mantenerse la justicia y el respeto a las obligaciones emanadas de los tratados y de otras fuentes del derecho internacional.

• a promover el progreso social y a elevar el nivel de vida dentro de un concepto más amplio de la libertad (ՄԱԿ-ի կանոնադրությունից):

Դիվանագիտական փաստաթղթերի շարահյուսական առանձնահատկություններից է պայմանական-գիջական ստորագրած նախադասությունների, ճկուն ձևակերպումների կիրառումը: Դիվանագիտական փաստաթղթերում գերիշխում են պատմողական նախադասությունները:

Բերված օրինակների քննությունը ցույց է տալիս, որ իսպաներենում դիվանագիտական լեզվին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

1. Շարադրանքի կաղապարություն, լեզվական շաբլոն, ընդունված, հաստատուն և կայուն կառույցներ և արտահայտություններ:
2. Տերմինների, հապավումների, համառոտագրությունների կիրառություն:
3. Բարդ ստորադասական նախադասությունների հարուստ կիրառություններ պատճառի, նպատակի, հիմունքի, հետևանքի երկրորդական նախադասություններով, որոնք ապահովում են խոսքի տրամաբանականությունն ու պատճառահետևանքային կապը:
4. Հուզական-արտահայտչական երանգավորումների՝ փոխաբերությունների, փոխանվանությունների, կրկնությունների, ծարտասանական դիմումների գործածություն:

The peculiarities of diplomatic language in Spanish- The goal of this article is to present the main peculiarities of diplomatic language in Spanish. The present study analyzes the morphological and syntactical peculiarities of Spanish language in diplomacy, as well as the use of diplomatic terminology, abbreviations and clichés. The present paper deals with stylistic analysis of diplomatic language and reveals the stylistic features of diplomatic language in Spanish.